21-03/32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ 10.04.92
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

---

Հայաստանի ամերիկյան համալսարան

պարոն Միհրան Աղբաբյանին

Խնդրում եմ միասին քննարկենք

այս խնդիրը։

Վ. Գնունի

Վ. Գնունի

08.04.92 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն

ԲԿ և Գ նախարարություն
պրն. Վ.Գնունի

---

Հարցը ք՛նարկել ՀԱՀ-ի ղեկավարության հետ։

ОБЩИЙ ОТДЕЛ

Գ.Արեշյան

№ 031-2484 «06» 04 1992 թ.

(8)

108-02
07 04 92

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր

375001, Երևան—001
Թումանյան փ. 8
Հեռ. 58-24-13

МИНИСТЕРСТВО
ЗДРАВООХРАНЕНИЯ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

М И Н И С Т Р

375001, Ереван, 001
ул. Туманяна, 8
Тел. 58-24-13

17.02.92 № 05-64/7

Ձեր
На № 031-861 от 07.02.92

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ`

ՊԱՐՈՆ Գ.ԱՐԵՇՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Արեշյան,

Առողջապահության նախարարությունը լիովին ողջունում է Հայաստանում նոր բժշկական ծրագրերի ստեղծման և իրագործման գործում Հայաստանի ամերիկյան համալսարանի նախաձեռնությունը: Մասնավորապես նախարարությունը պատրաստ է աջակցելու և համագործակցելու ՀԱՀ-ի առաջարկով բժշկական քոլեջի կազմակերպման գործին:

Ինչ վերաբերվում է առաջարկված բժիշկների կատարելագործման ինստիտուտի շենքը որպես բազա նշված նպատակով տրամադրելուն, ապա մեր կարծիքով դա լավագույն տարբերակը չէ: Ինստիտուտը կատարում է բավական մեծ ծավալով աշխատանք, կապված ինչպես բժիշկների, այնպես էլ միջին բուժ.անձնակազմի վերապատրաստման և կատարելագործման հետ, անցկացնում է նորավարտ բժիշկների հետդիպլոմային մասնագիտացում և այլն: Բացի այդ նախատեսվում է առաջիկայում բժիշկների կատարելագործման ինստիտուտի բազայի վրա ստեղծել առողջապահության կազմակերպման ինստիտուտ, որը բացի վերը նշված ֆունկցիաներից կիրականացնի նաև առողջապահության բնագավառում կատարվելիք ռեֆորմների գիտական ծրագրերի մշակումն ու ներդնումը:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ ՀԱՀ-ի ղեկավարության հետ վերջին հանդիպման ժամանակ եղավ պայմանավորվածություն, որ մեզ պետք է ներկայացվեն այն բոլոր բժշկական ծրագրերը, որոնք նախատեսվում են Հայաստանում իրագործվելու:

Նշված ծրագրերը ունենալուց և ուսումնասիրելուց հետո նախարարությունը կքննարկի նաև այն բազաների հարցը, որտեղ կիրագործվեն ծրագրերը:

Ա.ԲԱԲԼՈՅԱՆ